

Զ. ԼԷՇՈՊԱՐԴԻՒՑ

Միրոյ ցընորքներ, վսեմ երազներ . . .  
Նոքա հոյակապ գործի են պատճառ,  
Եւ գեղաժպիտ կուսի հրապոյըներ  
Տալիս են նոցա միշտ կեանք ծաղկավառ:

Բայց և նա բնաւ սէր չէ ճանաչում,  
Ում սիրտը երկչուտ մնում է քնած,  
Երբ ահեղ մըրկից երկինքն է գոչում  
Եւ գիղանում են ալիք կատաղած . . .

Երբ ամպերի մէջ կորած լեռներին  
Չարկում են ուժգին հըրեղէն շանթեր,  
Միայն խանդավառ ազատ աչերին  
Պատկերանում է ցնորք անվեհեր:

Ով կանայք, ով որ ստորոգութեամբ  
Ծունկ է խոնարհում չար բաղդի առաջ,  
Ով որ լոռում է, ըստրուկ զգացմամբ,  
Երբ հայրենիքի բաժինն է հառաջ,

Ով երկչոտութեամբ փախչում է դաշտից,  
Ուր որ պողպատի ցոլում են սրեր,  
Եւ չուզէ զրկուիլ անփառք հանգատից,—  
Ո՞հ, նա չգիտէ սիրել ձեզ, կոյսեր:

Երբ նա ձեզ մօտ դայ՝ աղերս շրթունքին,  
Հեռացէք դուք լուռ արհամարհանքով.  
Թուլամորթ, ըստոր, երկչուտ ստրուկներին  
Դուք մի պսակէք սիրոյ պսակով:

Յ. Յովկաննիսեան.

